ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1880

№ 97 ՓՈԱՆԵԼԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 97

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

ԾԱՆՕԹԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻՋԱԿ ՏԱՌԵՐԻ ՎՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ.

ԾԱՆՕԹԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ.

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.

ՕՁԱՐԱԳՐԱԿԱՆ. ԳԻՄՈՒՄ ԵՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԸ РЕД. ГАЗЕТЫ „ПЧЕЛА АРМЕНИИ“ Г. Тифлисъ.

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

„ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

Ապառիկայ 1881 թուականին կ'հրատարակվի նոյն ուղղութեամբ և դիրքով։ Տարեկան գինը կ'լինի 10 ռուբլի։

Ապառիկայ տարին «ՄԵՂՈՒՆ» կ'դառնայ ԱՄԵՆՕՐԵԱՅ թերթ բաժանորդագրական ընկերութեամբ։ Այս ընկերութեան վերջնականապես կազմակերպվելուն, նորա պայմանների և կանոնադրութեան մասին կ'յայտարարենք իւր ժամանակ։ Ընկերութեան մասնակցել կարող են և օտար բաքաղաքացիք. բաժանորդ գրվել ցանկացողը կարող են դիմել իշխան Նապոլէոն Ամաասունն կամ լսմբագրութեանս։ Մի քանի անձինք ընկերութեամբ մի բաժին կարող են ունենալ։ Բաժինն է 200 ռ.։ «ՄԵՂՈՒՆ» կունենայ իւր մասնաւոր մշտական թղթակիցները Ցածկահայաստանի մի քանի գլխաւոր կետերում, իւր հեռագիրներն, ինչպես և իւր մշտական աշխատակիցները վարձով։ Վարձ կ'սահման և նոքա, որոնք կ'տան լսմբագրութեան բանասիրական, պատմական, վիպական և գիտնական գրուածքներ, եթէ միայն սոքա ընդունելութիւն կ'գտնեն լսմբագրութեան կողմից։ Այս մասին պայմանները կ'հրատարակվին նոյնպէս իւր ժամանակ։ Առանձին ուշք կ'դարձնվի քաղաքական բաժնի վերայ։

Այժմ խնդրում է լսմբագրութիւնս իւր գործակալներից, որքան կարելի է, շուտով հասցնել նրան ստորագրվողների հասցէները, որպէս զի նա կարողանայ իւր անօրէնութիւններն անել։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սովը Հայաստանում։

Ազգային.—Թղթակցութիւնք Երեւանից, Սատարապօղից, Փիլիպոսից և Թէհրանից։

Մանր լուրեր։

Յայտարարութիւններ։

Բանասիրական.— Պրօգրէս։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՕԳՐԷՍ.

Ա.

Պրօգրէս, պրօգրէս, ինչ քաղցրութիւն
այս բառում,
Սա է միակ վէհ պարծանքը մի ազգի,
Որանով միայն թոյլ ամէն մարդ այս դա-
րում
Հըպարտանայ և հասանի մեծ փառքի...
Այդ չատ պէտք է, լինի՝ներքին, արտաքին,
կամ թէ ընդդէմ միանդամայն ոյջ մարքին,
Հարցնող չը կայ—այդ միչտ նոյնն է մեր
աչքին՝
Եթէ անգամ հակառակ է օրէնքին.
Կրթութիւն է մեզ հարկաւոր անկասկած,
Թէ չորերում, թէ գլխի մէջ հաւաքած,
Թէ գոզացած, չոր ու ցամաք՝ֆիքրաներում,
Ինչպէս լինի՝ թոյլ դա լինի այս դարում,
Որով և մենք խըրոխտ խըրոխտ չատի պէս
Բարձր կուչենք՝թէ անում ենք մեծ պրօգրէս։

Բ.

Ամեն իրը թանդացել է այս տարի,
Կոպէկ ասես՝ չի մնացել գրպանում,
Ով որ կուզես՝ կերաւ փողը բանկերի,
Միչտ փառք տալով սընանկութեան իւր
սրտում...
Ամեն մանուկ ստացել է խելք, հանճար,
Ամենքն էլ չուտ միչտ չատ են ընթանում,
Կրթութիւնը մտրակի տակ անգադար՝
Այծի մօրուք և ակնոց են կախ անում.

Լուսաւորում մեր գեռ հառրակ, թոյլ
մարքեր...
Ամեն ծակում կազմած ունին ժողովներ,
Ուր հայութեան փղէալըթ կոկվում է,
Ուր կրթվում են խնդճ ազգութեան սե-
րունդներ,
Եւ ուր միչտ նոյն հայ խնդիրը սերա-
վում է...
Այստեղ կտեսնես հայ—թիէրներ հաւա-
քած՝
Միչտ օրական խնդիրները վճռելիս,
Ազգի ներկայ խնդճ վիճակից բորբոքած՝
Տոկուն անճանց, համեստ մարդոց մըրե-
լիս...
Եթէ դու էլ այս նիստերին դառնաս՝
Յիրաւ կասես, որ անում ենք մեծ պրօգ-
րէս։

Ե.

Որքան մեծ է կրթութիւնը այս դա-
րում,
Որին անգամ պիտ Եւրոպան նախանձի,
Մանուկներն էլ դեր են խաղում լրագ-
րում,
Մըղօն տալով գրականութեան, հայ—
հարցի...
Առատ բնութիւն իւր ըստեղծման գոր-
ծերում
Ամեն քանքար պարգեւել է մեր հային,
Փիլիսոփայ քննողութեան հարցերում՝
Նա հերոս է անսանձ սիրով ազգային,
Ամեն բանի գլխաւին ունի գաղափար,
Առանց ուսման նա կը վիճէ ֆրազներով,
Կը տաքանայ և կը վճռէ սաստկարար՝
Մի քանի ճոխ եւրոպական բառերով.
Եթէ ուչիմ այս կողմերն էլ լաւ քննես՝

Կը համոզուիս, որ անում ենք մեծ պը-
րօգրէս։

Զ.

Այժմ գառնանք մեր հայ տիկնանց մեծ
հարցին,
Որոնք ն'ս լուսաւորեալ այս դարում
Գեղարուեստից նուրբ ճաշակը ըզգացին,
Եւ խելքի տեղ՝ մարմիններըզարդարում
Քաղաքական անտեսութեան աշխարհում
Սոսկավիթխար, մեծ մեծ քայլեր են ա-
նում
Մարդոց փողեր զարդերի են աւերում,
Եւ դեղս կեանքով նոցա տունը կործա-
նում.
Բայց առաւել նոքա սիրեն կլիբները,
Valse, mazourka նոյնպէս չահիլ պատա-
հիլ,
կայլանդակեն երեսի բուն գոյները,
Եւ փոփոխեն նոյն իսկ բնութեան գը-
ծագիրքը...
Եթէ կանանց քաջութիւնն էլ դու տես-
նես՝
Դու էլ կասես, որ անում ենք մեծ պը-
րօգրէս։

Է.

Սրանից առաջ կրկար էին հագուստ-
ներ,
Երկու արշին չէյֆն էլ ետքից կախ ա-
րած,
Ալում էին մեր Թիֆլիզի փողոցներ,
Վարչութիւնն էլ նրանցից գոհ էր մը-
նացած.
Ձևը փոխուեց, մի նոր ֆասօն մտցուե-
ցաւ,
Ետևիցը չանկալ կապած չոր հագնել,

ժողովելու։ Ինչպէս իմանում ենք, ժո-
ղոված գումարն արդէն 20,000-ից
անց է և դեռ յոյս կայ էլի բաւա-
կան ժողովելու։ Յարգ և պատիւ գոր-
ծող պարոններին։ Մենք չենք տա-
րակուսում, որ մեր միւս հայ հա-
սարակութիւնքն էլ չեն կամենալ
յետ մնալ իւրեանց աւագ եղբայ-
րից, Թիֆլիզի հայ հասարակութի-
նից, և իրանք էլ հետևելով սորա
օրինակին կ'կազմեն կանոնաւոր մաս-
նաժողովներ, որոնք յանձն կառնուն
իրանց հասարակութեանց մարդասի-
րական և եղբայրսիրական զգացմանց
Թարգման լինելու։

Հայի յատկութիւնն է ողորմած-
սիրութիւնն և ինչ առաւել քաղ-
ցը զգացմունք կ'լինի մարդուս հա-
մար քան իւր սուված և կարօտեալ
եղբօր օգնել կարողանալը։ Պէտք է
իմանանք մենք Ռուսաստանի հայերս,
որ մեր օգնութիւնը Ցածկահայաս-
տանի հայերին մեծ բարոյական ազ-
դեցութիւն ունի և նրանց շրջապա-
տող քրդերի և տաճիկների վերայ,
որոնք տեսնում են այդ հանգամանքի
մէջ հայ ազգի գերազանցութիւնն
իւրեանց վերայ, և միևնոյն ժամա-
նակ նորա փշրանքներից իրանք էլ օ-
գուտ քաղելով ակամայ երախտագի-
տական զգայմամբ են զգաճվում դէ-

խեղճ Թիֆլիզն էլ փուշով ցեխով լցուե-
ցաւ՝
Վարչութիւնն էլ կանանց սկսեց մեղադ-
րել։
Ամենասուրբ, մեզի ճաշակով կը հագնին,
Չնզկահաւի ձևերովը կը փքուին
Այդ զարդերում, այդ ձևերում այլազգին
Եոլորովին չես ճանաչիլ մի հայ կին...
կապիկներ են մեր կանայքը, դու կասես,
Բայց մեզք կանես—զի անում են մեծ
պրօգրէս։

Ը.

Նոքա իւրեանց մանուկների կրթու-
թեան
Մի առանձին ուշադրութիւն են դարձ-
նում,
Մեծ և վըսեմ, սուրբ պարտքերը մայ-
րութեան
կատարում են և հայօրէն զարգացնում.
Իւրեանց ծաղիկ, գեռ նորածին զաւակց
Օտար ձեռաց, օտար կաթի կը յանձնեն,
Սընունդ կը տան ամուլ կաթով այլազ-
գաց,
Որ հայ ազգին լաւ սերունդներ պատ-
րաստեն.
Փախստական մանկավարժներ Ազատից
Մեծ ռոճիկով հայ գերդաստան կընդունին,
Որոց ձեռքով գեռ ծաղկարոյս հասակից
Եւրոպայի քնքուշ ձևեր կուսանին...
Բայց մայրերը ինչ կը չինեն, դու կասես,
Կլիւբում կպարեն, որովհետև է պրօգրէս։

Թ.

Կանքը մաշած, պատիւ զոհած տի-
կնները
Թիֆլիզ կը գան լուսաւորեալ վիճնաչէն,

Ղ Ա Զ Ա Խ Ց Ի

Չէիմ ծիծաղում։ Ուրախ եմ, որ ինձ ծիծաղում են — իմ ոսկեգույն հիշողություններ, որ ինձ ծիծաղում են, ինչպես ես ծիծաղում եմ ինձ վրա, երբ ինձ ծիծաղում են։ Ես ինձ վրա ծիծաղում եմ, որ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԻՇՏ

1880 ՓԵՏՐՎԱՐԻ 8

ԹԻՎ 97

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԻՇՏ

1880 ՓԵՏՐՎԱՐԻ 8

ԹԻՎ 97

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԻՇՏ

1880 ՓԵՏՐՎԱՐԻ 8

ԹԻՎ 97

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԻՇՏ

1880 ՓԵՏՐՎԱՐԻ 8

ԹԻՎ 97

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԻՇՏ

1880 ՓԵՏՐՎԱՐԻ 8

ԹԻՎ 97

ղում էին, յայտնում էք պարզ նոցա անբարոյական վարքը:

Թատրոնական և Աւարայրեան ընկերութիւնները իսկապէս տէր հօր խորհրդովն և համոզմամբն են հիմնուած, զուք ինքնիրք վիպում էիք ինձ և կը վկայեն այժմ էլ Դավըիժու աղնիւ սրտերը, մինչև անդամ տէր հօրը այն ժամանակէն ի վեր ժողովրդեան խաւարասէր դասը մինչև յայսօր «օյինչի տէրտէր» են անուանում այդ տեղ: Իսկ Աւարայրեան ընկերութեան մասին Ջուվախիմ աղայ Ֆեներ Ճանցի ժամանակ փաթվաղեանցը խոստանում էր, որ եթէ օրիորդայ վարժարան բանան ինքն և իւր զուտերը մի ամբողջ տարի ձրի դասախօսութիւն կանեն, ուստի այդ ընկերութեան հիմնուելու պատիւը ևս մասամբ նորան կը պատկանի:

Գալով նորա ուսման մասին, տէր Մեսրովբը աւարտել է ուսումը Ս. Պօլսոյ իւր ժամանակին ամենանշանաւոր եղած վարժարանում, և եթէ աւարտած ևս չը լինէր ինչպէս նշանակուեր, քանզի մեր ուսումնականներէն շատերը երևելի վարժարաններում աւարտած չեն իւրեանց ուսման ընթացքը, ուստի դա էլ մի փաստ չէ նորան տգէտ համարելու, նա երեսուն տարիներէ ի վեր դաստատուած է դաստառ վանում, Ազուլիսում և եթէ Ցամկաստանի շատ քաղաքներում, և իւր արժանաւոր ծառայութեանց համար գոհունակութեան թղթեր ունի ի ձեռին: Նա ունի մի քանի հատոր հեղինակութիւններ, ողբերգութիւններ, կատակերգութիւններ, նա ստացել է վկայական Հայրապետէն առանց միջնորդի խոչ և օրհնութեան կոնդակ, ի արիատուր իւր ազգօգուտ աշխատութեանց և զոհաբերութեանց: Գեր. Անդրէաս արքեպիսկոպոսէն ստացել է աւագ քահանայութեան պատուոյ նշան ծառայած յառաջադիմութեան համար: Եւ այժմեան Ամրպատեանի վիճակաւոր գեր. Գրիգոր Մուշեղեանց արքեպիսկոպոսը, տեսնելով նորա եռանդը գէպի ազգը և այս տարուան օրիորդայ վարժարանի յառաջադիմութիւնը, ընտրել է նորան ծագկաւոր փիլոն կրելու իրաւունքը հանդերձ օրհնութեան թղթով, որի մէջ խրախուսում է և քաջալերում, որպէս զի առաւել օգտաւէտ պարապմանց լինի հէգ հայրենեաց պարծին մէջ:

Տեսին Աշխէն օրիորդայ զարգոյն վաժուհոյն մասին ևս չէ կարելի լռել. նա ամենայն հաստատութեամբ ծառայել է ազգին և բատ իւր կարեացը կրթել է իւր համարիւն քոյրերը, որոյ անխոնջ և անխնայ աշխատութեանց ապացոյցն եղաւ քընտութիւնն, յորում ընդունել է սրբազան հօր օրհնութիւն և համոյն հանդիսականաց և հոգաբարձուաց ջերմ ընդհակառակութիւնքը և քանիցս անգամ ազգային թատրոնական բեմին վերայ (զը նայելով մեր սովրական բամբասանքներին) դերասանուհութեան պաշտօն կատարել է և ամենայն յաջողութեամբ արժանացել է հանդիսականաց ծափահարութեանց, ուրեմն սոքա ստոմնա կարդացող կնոջ գործ չեն, և նորան ընդհակառակ լինելու համար բարի սրտեր հարկաւոր են, որք գոչէին ի սրտէ՝ կեցցեն մեր ազգի այդպիսի անձնուէր հայուհիքն:

Ես պարտն գիտեմ Գ. Շահնազարեանցին մանրիմ բարեկամը լինելով, խորհուրդ կը տամ որ չիտ այսու այդպիսի անիրաւացի նամակների ստորագրութիւնը իւր վերայ չը առանձնէ, և փուխթայ տէր հայրից ներումն խնդրելու որ անշուշտ հայրաբար կ'ներէ իւր նախկին աշակերտի ակամայ յանցանքը, ուշադրութիւն չը դարձնելով այդպիսի դատարկ նամակների, և կը յարատևէ իւր անձնանուէր ծառայութիւնները ազգային մանկական կրթութեան ասպարիզին մէջ, քանզի, ըստ ընդհանուր սովորութեան, բարերարութեան վարձատրութիւնը մի «փշեղէն սրտակ» է:

Հրոնտ Ներսէսեանց:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Նովոսուց հաղորդում են, որ այնտեղ մթերքների գները օրէցօր բարձրանում են և ժողովրդեան վերայ երկիւղ գոյում ձմեռուան գալիք թանգութեան վերաբերութեամբ:

***

Խմբագրութիւնս չնորհակալութեամբ ստացաւ պ. Ա. Դուշամիրեանցի օրացոյցը առաջիկայ 1881 թուականի, իւր յաւելուածով «Ցադիկ ընտանեաց», որ բովանդակում է զանազան տեղեկութիւններ: Այն օրացոյցն երկու պատկերներ ունի երես օրացոյցն երկու պատկերներ ունի երես Արիստակէս կաթուղիկոսի և «Սովետ հայ ընտանիքի»-ի, որ գաղթած է Նորդովղէն Վան:

***

Խմբագրութիւնս չնորհակալութեամբ ստացաւ բժշկապետ մեծ. պ. Գ. Քուչարեանցի «Վէներեան ախտեր» գրքոյկն, որոյ բովանդակութիւնը հետևեալն է.

Վէներեան ախտի պատմութիւնը հին աշխարհումն: Այժմեան աշխարհագրական տարածումն այս ախտի և նորա պատճառներն: Այս ախտի բժանդութիւնը և դասակարգութիւնը: Տրիպէր և նորա հետևանքներն: Փափուկ չանկիր և նորա հետևանքներն: Սիֆիլիս, նորա քաղքային ներգործութիւնը հիւանդի ամէն մի անդամի վերայ և ապագայ սերունդի վերայ:

Ընդհանուր և մասնաւոր խորհուրդներ այս ախտերի դէմ:

Յաւելուած, Վայրահեղ գրգիռն, երազախտութիւն և մարմնաչարժութիւն: Սեռական անբնդունակութիւն: Խորհուրդներ այս հիւանդութեանց մասին:

Ամենքին հասկնալի է այսպիսի երկասիրութեան օգուտն ժողովրդեան առողջապահութեան համար, երբ այքի առաջ ունենանք, որ վերոյիշեալ ախտերը մեր հասարակութեանց կեանքի փոփոխութեան հետ օր առուր աւելի ընդարձակ տարածութիւն են բռնում իրանց համար: Որքան երիտասարդ այժիր փչացնում են այդ ախտերով վարակված, կամ ամօթխածութիւնից և կամ տգիտութիւնից հիւանդութեան սկզբումն իսկ ուշ չդարձնելով նորա վերայ և թոյլ տալով հիւանդութեան հաստատ հիմք դնելու նոցա քնքոյշ կազմուածքի մէջ: Խորհուրդ կտանք այդ գրքոյկից ձեռք բերել ամենքին, որք կարող են ենթարկվիլ այդ ախտերին և օգուտ քաղել նրանից, որով ոչ միայն իրանց, այլ և իրանց ապագայ սերունդը կպահպանեն այդ ախտերի ազդեցութիւնից: Գրքոյկի գինն է չատ չափաւոր — 25 կոպէկ: Շնորհակալութիւն մեծ. երիտասրդին, ցանկալի էր, որ մեր յարգելի բժիշկները այդպիսի գրքոյկների թիւը չատացնէին յօգուտ ժողովրդեան առողջապահութեան:

***

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ հաղորդում են, որ թէև կայ այստեղ կանոնաւոր ընթերցարան—բայց զժբաղդաբար այդտեղ յաճախողներ չատ քիչ են և տիկնայք աւելի ախորժում են ժամանակը պարապ անցկացնելու իրանց տներում:

***

Նոյն տեղից մեզ գրում են, որ այնտեղի թատրոնասէրների խումբը մտադիր է ջրօրհնեաց օրուանը տալ մի քանի թատրոնական ներկայացումներ. միայն չատ նեղ վիճակի մէջ է կանանց դերերի վերաբերութեամբ: Կարող կանայք քաշվում են բեմ դուրս գալու, երկիւղ կրելով ժողովրդեան մէջ տարածված նախապաշարմունքից և բամբասանքից:

***

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են հետևեալ տողերը.

Նոյեմբերի 24-ից մինչև 29-ը այստեղ ձիւն եկաւ, և մօտ կէս արշին կանգնեց: Ասում են որ այսպէս վազ այս քանակութեամբ ձիւն տեսնուած չէ, օրերը տաք են անցնում:

— Տեղւոյս երիտասարդաց խումբը մտադիր է մօտ ժամանակներս մի ներկայացումն տալ յօգուտ ուսումնարանի մանկապարանի. ցանկանում ենք յաջողութիւն և ժողովրդի կողմից համակրանք:

— Ուսումնարանի հոգաբարձու և գանձապահ պ. Ալավերդի Դաւթեանը իւր անխոնջ զէպի ուսումնարանը ունեցած տոհմն աշխատանքով արժանացել է բոլոր տեղւոյս բնակչաց առանձին համակրանաց. կրանի որ այդպիսիներն անպակաս լինեն մեր միջից:

***

Վաղը, ամսոյս 18-ին հայ դերասանական խումբը կներկայացնէ առաջին անդամ «Փարիզու աղքատներ», դրամայ 5 գործողութեամբ:

***

Պ. Աբչակ Տէր-Յարգսեան Ագապեանը մեզ գրում է ՉԱՔԱԹԱԼԻՑ հետեւեալը.

Ներկայ 1880 թուին վերջ տալով ինակատար թարգմանութեանը ի հայ բարբառ հետևեալ հեղինակութեան. «Бесѣды о природѣ.—Книга для чтенія въ селахъ и деревняхъ, въ которой разсказывается о землѣ, солнцѣ, звѣздахъ, растеніяхъ и животныхъ, съ 24 рисунками. Н. Зобовъ.», պատիւ ունիմ յայտնելու իմ համազգի եղբարց, որ իզուր ժամակրոյս չլինել նոյն գիրքը նորից թարմանալով, որովհետև կարճ ժամանակից ուզարկելու եմ տպագրելու յիշած թարգմանութիւնս:

***

Հատուած աղբիւրներից իմանում ենք, որ Նորին Օծութիւն՝ վեհափառ Հայրապետը բարեհաճել է հաստատել Ներսիսեան դպրոցի նորընտիր հոգաբարձուաց իրանց պաշտօնի մէջ և օրհնում է նրանց վարելու այդ պաշտօնը յօգուտ և ի յառաջադիմութիւն դպրոցի:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՁԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶԻ քաղաքային վարչութիւնը հասուցանում է հասարակաց դիտութեան, որ ՏԱՒՈՒՂ մերթելու հարկի կատարելութիւնը թիֆլիսի քաղաքային առաջին դիվիզիի վաճառականի յարութիւն Քարասաշվի անձնդութեան և այս տարիս նորանից կատարը խրելու պատճառով, նշանակած է վարչութեան առնեում ամերդահաստութիւն 20-ին ներկայ դեկտեմբերի կատարով տալու համար վերոյիշեալ հարկը, 1881-ի յունվար 1-ից մինչև 1-ն յունվարի 1882 թուականի ժամանակամիջոցով:

Յանկացողք կարող են կարդալ պայմանաթուղթը առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յիտ քաղաքային վարչութեան գրասենեակում, բացի կիւրակի և տօն օրերից:

ԹԻՖԼԻԶԻ քաղաքային վարչութիւնը հասուցանում է հասարակաց դիտութեան, որ ներկայ դեկտեմբերի 5-ին տեղի ունեցած անյաջող ածրը զաղափոխութեան պատճառով կապալ տալու համար արհեստական ջրբեր ծախելու իրաւունքներն, որոնք զբաղեցրած են գոլովինսկի պրոսպեկտում 5 հատ, երևանի հրապարակի վերայ 2 հատ, Աղեքսանդրեան պարտիզի մօտ 1 հատ, Աբաս-Աբատի հրապարակում 1 հատ և Նաւթլուղում 1 հատ առաջիկայ 1881 յունվարի 1-ից մինչև 1882 թ. յունվարի 1-ը ժամանակամիջոցով, նշանակվում է նոր աճրդավաճառութիւն ներկայ դեկտեմբերի 22-ին քաղաքային վարչութեան առնեում: Յանկացողք կարող են կարդալ պայմանները ամեն օր առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յիտ քաղաքային վարչութեան գրասենեակում, բացի կիւրակի և տօն օրերից:

ՄԱՆԳԱԼՈՒՍՈՒՄ
վաճառվում է ԱՄԱՐԱՆՈՑԸ ԲԺԻՇԿ ՎԶՈՐՈՎԻ: Յանկացողք դնել կարող են դիմել իրան ամարանոցի տիրոջ գրասուը կերպով կամ ամառը:

ՕՐԱՑՈՑՑ

ԱՐԳԷՆՎԱՃԱՌՎԻՄԷ

ՕՐԱՑՈՑՑ

ՄԵԾԱԴԻՐ

1881 Թ. Փ.

Սկզբումը գեղեցկանդակ պատկերք

Ս. ԱՐԻՍՏԱԿԻՍԻ

Բոլոր օրհ., հրչ., մկ., հմբ., և այլն դրուած են կարգաւ հանդերձ:

ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ

Յաւելուած ջ. ա.

Որի սկզբումն է գեղեցկանդակ պատկերք Սուրբ Հայ գերդաստանաց.

Գինն է մինչև 600 փ. . . . 35 կ.
Իսկ նորանից բարձր . . . . 40 կ.

Փոքրադիր ՕՐԱՑՈՑՑ
1881 Թ. Փ.

Հանդերձ երկու գեղեցկանդակ պատկերաւ, հայկական Նաւապարի և Ս. Պ. Ե. Հայոց եկեղեցին ս. Եկատարինեայ.

Գինն է 10 . . կ.

Տփխիսում ծախվում է պ. ջ. Գրիգորեանցի գրավաճառանոցում:

ՊՐԻՆՏԵՐ ՄԱՐՏԻՐՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԹԱԹԵՐԹ